Հայկ ԲԵՋԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2014 թ., ավարտելով ՀՊՏՀ-ն «Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում» մասնագիտությամբ, ընդունվել է ասպիրանտուրա՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ: 2017 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան և աշխատանքի անցել ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնում. սկզբում՝ որպես դասախոս, ապա ասիստենտ: Հեղինակ է 2 մենագրության և 10-ից ավելի գիտական հոդվածների:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ «ԳԱՂՏՆԻՔԸ». ՊԱՏՐԱ՞ՆՔ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, տնտեսական ակտիվություն, համախառն ներքին արդյունք, տնտեսության չդիտարկվող հատված*

Գրեթե բոլոր ժամանակներում, երբ վիճակագրական ծառայության հրապարակած տնտեսական ցուցանիշները քիչ թե շատ դրական արդյունք են արձանագրում, դառնում են երկակի մեկնաբանման հիմք, ինչին ականատես ենք լինում նաև մեր օրերում: Մասնավորապես՝ մասնագետների մի խումբ, հիմնականում՝ իշխանական շրջանակից, շտապում է հպարտանալ տնտեսական աճի բարձր տեմպերով, իսկ մյուս մասը բուռն քննադատության է ենթարկում ներկայացվող ցուցանիշները՝ դրանց վերաբերյալ հայտնելով անվստահություն ու Ազգային վիճակագրական կոմիտեին մեղադրելով «թվեր նկարելու» մեջ:

Ժամանակակից աշխարհում վիճակագրությունը բավական «թանկ հաճույք է», և Հայաստանի նման փոքր ու սահմանափակ ռեսուրսներով երկրները, հրապարակվող պաշտոնական վիճակագրությունից զատ, սովորաբար, չեն ունենում այլընտրանքային վիճակագրություն, որը հնարավորություն կտար տվյալների նույնականացմամբ փարատելու բոլոր կասկածները կամ հայտնաբերելու շեղումներ: Սակայն, մյուս կողմից, վիճակագրությունը ճշգրիտ գիտություն է, և տնտեսական շղթայում տարբեր ցուցանիշների համադրմամբ ոչ միայն կարելի է ուսումնասիրել տնտեսական աճ ապահովող հիմնական բաղադրիչները, այլև գնահատել դրանց արժանահավատությունն ու օբյեկտիվությունը:

Այսպես՝ տնտեսական զարգացումները բնութագրող հիմնական ցուցանիշներն են տնտեսական ակտիվության ցուցանիշը (այսուհետ՝ ՏԱՑ), որը հրապարակվում է ամսական պարբերականությամբ և համախառն ներքին արդյունքի ցուցանիշը (այսուհետ՝ ՀՆԱ), որը հաշվարկվում և հրապարակվում է եռամսյակային պարբե-

ռականությամբ: Դրանցից առաջինը՝ ՏԱՑ-ը, ըստ Վիճակագրական կոմիտեի մեթոդաբանության, երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշ է: Այն ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր տեսակները և սկզբնապես հաշվարկվում է նախորդ տարվա միջին տարեկան գներով, ինչը հնարավորություն է տալիս ունենալու տվյալ ամսվա արտադրանքի թողարկման ծավալի իրական փոփոխությունը նախորդ ամսվա և նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ:

Տնտեսական աճը բնութագրող հաջորդ և հիմնական ցուցանիշը ՀՆԱ-ն է, որը, ըստ վերոնշյալ մեթոդաբանության, բնութագրում է երկրի տնտեսությունում արտադրված ապրանքների ու ծառայությունների (հանած միջանկյալ սպառումը) արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար: ՀՆԱ եռամսյակային և տարեկան ցուցանիշները հաշվարկվում են՝ համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի ամփոփ, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների: Ընդ որում, ՀՆԱ-ն ներառում է նաև չդիտարկվող տնտեսության գնահատականը, որին կանդրադառնանք ավելի ուշ:

Գծապատկեր 1-ից ակնհայտ է դառնում, որ ինչպես այս, այնպես էլ նախորդ տարի (2018 թ.) ՏԱՑ-ը դրսևորել է աճի բավական բարձր միտում: Ընդ որում, եթե նախորդ տարվա ընթացքում աճը դանդաղ է եղել, ապա այս տարի այն դրսևորել է ավելի կայուն վարքագիծ և առաջին 8 ամսվա ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, արձանագրվել է 7 տոկոս աճ: Իհարկե, այս ցուցանիշը չի հավակնում դառնալու մեր տնտեսական աճի ամբողջովին հավաստի ցուցիչը, որովհետև տնտեսական ակտիվության ցուցանիշի և տնտեսական աճի միջև առկա են որոշակի շեղումներ, սակայն տնտեսական զարգացումների համար, ունենալով ամսական հրապարակումներ, ՏԱՑ-ը բավական լայն հնարավորություններ է ստեղծում ուսումնասիրությունների համար: Մասնավորապես՝ դիտարկելով ոլորտային ցուցանիշների դինամիկան, կարելի է հստակ պատկերացում կազմել, թե արձանագրված 7-տոկոսանոց տնտեսական ակտիվությունը որ ոլորտների հաշվին է ապահովվել (գծապատկեր 2):

2019 թ. առաջին 8 ամսվա ընթացքում ՏԱՑ-ին ամենամեծ նպաստն են բերել ծառայությունների և առևտրի ոլորտները, արդյունաբերությունը և շինարարությունը: Գյուղատնտեսության ոլորտը, որի ցուցա-

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տնտեսական ակտիվության ցուցանիշը

(կուտակային՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)



Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/doc/99514828.pdf, https://www.armstat.am/file/doc/99512073.pdf

** ՀՆԱ 3-րդ և 4-րդ եռամսյակների ցուցանիշները ներկայացրել ենք ըստ 2020 թ. պետական բյուջեի նախագծի հիման վրա կատարած մեր կանխատեսումների:*

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ոլորտների նպաստումները ՏԱՑ-ին
(կուտակային)



Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/doc/99514828.pdf և հեղինակի հաշվարկներ:

նիշը, այս տարվանից սկսած, հրապարակվում է եռամսյակային կտրվածքով, թե՛ առաջին և թե՛ երկրորդ եռամսյակներում ունեցել է բացասական նպաստումներ, համապատասխանաբար՝ -0.3 և 1.1 տոկոսով:

Արդեն ՀՆԱ «բացվածքի» ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ծառայությունների ոլորտի աճը պայմանավորված է հիմնականում մշակույթի, հանգստի և զվարճությունների ճյուղի շարունակական աճով (նպաստումը՝ շուրջ 5.5 տոկոս), որի մեջ գերակշիռ մասը պատկանում է շահումով խաղերի ենթաճյուղին: Առևտրի ոլորտում ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ առևտրի մասով առկա են դրական զարգացումներ, իսկ նպաստումները համապատասխանաբար՝ 5.6 և 4.2 տոկոս են: Արդյունաբերության ոլորտում հիմնական աճին նպաստողը եղել են մշակող ճյուղը, որի աճը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ 10.1 տոկոս է, իսկ նպաստումը՝ 6.7 տոկոս և հանքագործական ճյուղը, որը նախորդ տարվա պասիվացումից հետո այս տարվա առաջին կիսամյակում արձանագրել է 14.8 տոկոս աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ իր հերթին 2.8 տոկոսային կետով նպաստելով արդյունաբերության ոլորտի աճին:

Այսպիսով՝ ՏԱՑ-ի և կիսամյակային ՀՆԱ բաղադրիչների վերլուծությունից պարզ դարձավ, որ թեև տնտեսական աճը համատարած չէ բոլոր ոլորտներում, սակայն, շնորհիվ մի քանի ոլորտներում արձանագրված աճի բարձր տեմպերի, միջինացված ցուցանիշը ևս բավական բարձր է: Սակայն, սա երևույթի միայն մի կողմն է, որը հնարավորություն է տալիս գնահատելու տնտեսական աճի հիմքերը: Մյուս կողմից, խոսելով այդ հիմքերի ամրության մասին, պետք է կարողանանք գնահատել դրանց հավաստիությունը: Ինչպես արդեն նշեցինք, ՀՆԱ ցուցանիշը, տնտեսության հատվածների փաստական տվյալներից զատ, ներառում է նաև տնտեսության չդիտարկվող մասը: Պարզ ասած, Վիճակագրական կոմիտեն ՀՆԱ ցուցանիշի վրա ավելացնում է տնտեսության՝ իր գնահատած ստվերը, որպեսզի ամբողջացնի տնտեսության պատկերը: Տեղին է նաև հիշատակել կառավարության պայքարը ստվերի դեմ, որն արտացոլվում է մի շարք ուղղություններով: Այս տեսանկյունից, ստվերի կրճատումը բնութագրող ամենապարզ ցուցանիշը հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունն է, որը վերջին տարիներին էականորեն բարելավվել է: Այդուհանդերձ, դրա արդյունքում վերջին տարիներին Վիճակագրական կոմիտեի կողմից չդիտարկվող տնտեսության գնահատականը չի փոխվել: Համադրելով հարկեր/ՀՆԱ և այդ ցուցանիշը՝ ստանում ենք ամբողջական պատկեր (գծապատկեր 3):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Հարկեր/ՀՆԱ և չդիտարկվող տնտեսության գնահատականները



Աղբյուրը՝ armstat.am և minfin.am, https://factor.am/136843.html,
*2017-2019 թթ. համար կիրառվել է հարկային եկամուտների ճշգրտված ցուցանիշը:

Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի աճը փաստում է, որ ստվերի կրճատում իսկապես եղել է, որը, սակայն, Վիճակագրական կոմիտեի հաշվարկներում հաշվի չի առնվել, արդյունքում, ստվերի կրճատումը զգալի մասով արտացոլվել է տնտեսական աճի ցուցանիշում՝ լրացուցիչ կերպով նպաստելով տնտեսական աճի բարձր ցուցանիշի արձանագրմանը: Ի դեպ, շարքերի ուսումնասիրությունից նույնպես պարզ է դառնում, որ, պատմականորեն, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի աճին զուգընթաց, չդիտարկվող տնտեսության գնահատականը նվազել է, ինչը ևս հիմնավորում է ասվածը:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ, մի շարք գործոններով պայմանավորված, տնտեսությունն արձանագրել է բավական բարձր աճի վեկտոր, ինչի արդյունքում արդեն 3-րդ տարին շարունակ արձանագրվում է միջինից բարձր տնտեսական աճ, որը վերջին տարում հիմնականում ծառայությունների և առևտրի ոլորտի ձեռքբերումների, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ արդյունաբերության ճյուղի ակտիվացման շնորհիվ է: Միաժամանակ, արձանագրված տնտեսական աճի «գաղտնիքներից» մեկն էլ չդիտարկվող տնտեսության գնահատականի չվերանայման հետ կապված մեթոդաբանական խնդիրն է, որը, ի հաշիվ ստվերի կրճատման, լրացուցիչ աճի պատրանք է ստեղծում, ինչը ևս վիճակագրորեն արտացոլվում է որպես տնտեսական աճ: Այս առումով, Վիճակագրական կոմիտեն պետք է քայլեր ձեռնարկի աշխատանքների թափանցիկության բարձրացման ուղղությամբ, որպեսզի տնտեսական և քաղաքական առումներով առանցքային նշանակություն ունեցող ՀՆԱ ցուցանիշի հաշվարկման հարցում «գաղտնիքներ» և «մութ կողմեր» չմնան, իսկ վիճակագրությունն օգտագործողներն էլ հաշվի առնեն այս հանգամանքն իրենց վերլուծություններում: